

«ՎԱՅՈՑ ԶՈՐ» ՏԵՂԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱՔԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Սկանա լճի ավազանից դեպի հարավ ընկած շրջանում տարածվում է Արփա գետի հովիտը, որն հարավ-արևմուտքում հետզհետե ցածրանալով միաձուլվում է Շարուրի դաշտին։ Մեր ամենահին վկայությունն այս հովտի մասին, որը հայտնի է Վայոց ձոր անունով, մ. թ. V դարից այն կոչվում էր անցնում¹։ Սակայն Վայոց ձորի առաջին հիշատակությունը զուտ պատահական բնույթ ունի։ Եթե հայոց Հովսեփ կաթողիկոսը չլիներ Վայոց ձորից, ապա այդ թուուցիկ վկայությունը մենք չէինք ունենա։ Եղիշեն գրում է. «Սուրբ Յովսէփ ի Վայոց ձորոյ՝ ի գեղջէ Հողոցմանց»²։ Ղազար Փարպեցու³ և Մովսէս Խորենացու⁴ հիշատակությունները էապես չեն տարբերվում Եղիշեի տեղեկությունից։

Հետագա շրջանի մի շարք հայ մատենագիրներ լոկ կրկնում են վերոհիշյալ հեղինակների վկայությունը⁵։ Անգամ X դարի պատմիչ Մեսրոպ Վայոց-ձորեցին, որ Հողոցիմ գյուղից էր և իրեն ազգակից էր համարում Հովսեփ Վա-

¹ Մովհնարի (նախկինում Քուանդուան) ուրարտական արձանագրության մեջ, որը թողել է Սարգսուրի որդի Ռուսան, բացի հիշատակված լճափնյա Adahunl, Uelikuhl, Lueruhl և Arquqln երկրներից, հիշվում են նաև 19 այլ երկրներ լճի այն կողմում՝ բարձր լեռներում։ Անտարակույս այդ երկրներից մի քանիսը պետք է դնենք Վայոց ձորի և Արցախի շրջաններում։ Թե հատկապես որ երկրներն էին գտնվում Վայոց ձորում, դժվար է ասել, որովհետև մինչև այժմ այնտեղ ուրարտական արձանագրություններ չեն գտնվել։ Նշված երկրներն են ըստ հերթականության՝ Գուրգումեյի, Շանատուաինի, Տերիուշաինի, Ռիշուաինի, []գուաինի, Արիաինի, Զամաինի, Իրկիմաինի, Էլաինի, Էրիւտուաինի, Աիդամանիունի, Գուրիաինի, Ալգիրաինի, Պիրուաինի, Շիլաինի, Ուիդուաինի, Ատեզաինի, Էրիաինի, Ազամբուունի։— Տե՛ս Դ. Ա. Меликишвили, Урартские клинообразные надписи. Москва, 1960, էջ 329։

² Եղիշեի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 178։ Տե՛ս նաև Եղիշեի Պատմութիւն Վարդանանց ըստ Անձնացեաց օրինակի. Թիֆլիս, 1913, էջ 231։

³ Զորոյ դհետ յաջորդեաց զաթոռ Հայրապետութեան աշխարհիս Հայոց, հրամանաւ երանելոյն Մաշտոցի՝ սուրբն Յովսէփ, որ էր ի գաւառէն Վայոց ձորոյ, ի գեղջէն որում անունն էր Խողոցիմաց։— Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան, աշխատասիրութեամբ Դ. Տէր-Սկրտչեան եւ Ստ. Մալխասեան, Տիֆլիս, 1904, էջ 38։ 101-րդ էջում. «...Յովսէփ ի Վայոց ձորոյ...»։

⁴ Իսկ զաթոռ եպիսկոպոսապետութեանն Ետեղապահութեամբ յաջորդեաց հրամանաւ երանելոյն Մեսրոպայ՝ նորին աշակերտն Յովսէփ քահանայ ի Վայոց ձորոյ, ի Խողոցիմ գեղջէն։— Մովսէսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Արեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տիֆլիս, 1913, էջ 358։

⁵ Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցոյ. Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 58։ Ստեփանոսի Տարսնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 78։— «...քահանայ ոմն Յովսէփ անուն, որ լեալ էր աշակերտ մեծին Մեսրոպայ, ի գաւառէն Վայոց ձորոյ ի գեղջէն Հողոցիմայ»։ Որոշ ձեռագրերում գրված է «Հողացիմայ»։ Մեծին Վարդանայ Բարձրբերդեցոյ Պատմութիւն տիեզերական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ էմին, Մոսկվա, 1861, էջ 74։ Հ. Տաշյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 92։ Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրութիւններ XIII—XVIII դդ., Բ. մաս, Երևան, 1956, էջ 327, 328 (Դավիթ Բաղիշեցու ժամանակագրութիւն, XVII դ.) և այլն։

յոցձորեցի կաթողիկոսին, առանձին նորություն չի ավելացնում մեր ունեցած տվյալներին և լոկ կատարում է մի փոքրիկ էքսկուրս, ցույց տալու համար, որ նա եպիսկոպոս չի ձեռնադրվել⁶:

Վայոց ձորի առաջին հիշատակության մեջ դեռևս պարզ չէ նրա առանձին գավառ լինելը: VII դարի «Աշխարհացոյց»-ում նա արդեն հիշվում է որպես Սյունյաց աշխարհի 12 գավառներից մեկը. «Իններորդ աշխարհ Սիւնիք, ընդ մէջ կալով Երասխայ, եւ Արծախայ, յելից Այրարատոյ, ունի գաւառս երկոտասան. զԵրնջակ, զՃահուկ, զՎայոց ձոր⁷, զԳեղաբունի՝ հոմանուն ծովովն, զՍոթս, զԱղահէճ, զԾղուկն, զՀաբանդ, զԲաղս, զԶորս, զԱրեւիս, զԿովսական, հոմանուն գետովք մինչև ցնակորգեան քաղաք և անցսն իւր, եւ Աղուան⁸ գետ: Լինի ի նմա մուրտ եւ գերերի եւ նունն ազնիւ, եւ ամուր տեղիք»⁹:

VII դարից սկսած Վայոց ձոր գավառը սկսում է ավելի հաճախակի հիշատակվել: Արաբ հեղինակ Բալաձորիի վկայության համաձայն պարսից Անուշիրվան արքան Սյունիքում կառուցում է Վայս ամրոցը, որտեղ նա բնակեցնում է խիզախ սիսականցիներին¹⁰: Վայս ամրոցի կառուցման մասին հաղորդում են նաև Իրն ալ-Ֆաթիհը¹¹ և Յակուտ ալ-Համավին¹², սակայն նրանք լոկ կրկնում են Բալաձորիին:

Բալաձորին կրկին հիշատակում է այդ ամրոցը կապված արաբական արշավանքների հետ: Ըստ նրա հաղորդման արաբ ղորավար Հաբիրը ջարդում է Սիսաջանի ընդդիմադրություն ցույց տվող բնակիչներին և գրավում է Վայս ամրոցը¹³: Որ այս ամրոցի անունը կապ ունի անտարակույս Վայոց ձոր անվան հետ, մենք կհամոզվենք քիչ հետո:

6 Գ. Հովսեփյան, Յիշատակարանք ձեռագրաց, հատոր Ա (Ե դարից մինչև 1250 թ.), Անթիլիաս, 1951, էջ 123—124:

7 Որոշ օրինակներում հանդիպում է Մայրոձոր ձևը, որն անկասկած գրիչների սխալն է, որովհետև այն այլևս չի հիշատակվում ոչ հայկական և ոչ էլ օտար մատենագրության մեջ:

8 Պետք է լինի «Աղուանոյ»:

9 Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, հավելված Ա, էջ 109: Տե՛ս նաև, «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացույ յաւելուածովք նախնեաց», Վենետիկ, 1881, էջ 33: Պրոֆ. Աշ. Արրահամյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ի տեքստում և Երևանի Մ. Մաշտոցի անվան մատենադարանի № 1717 ձեռագրի «Աշխարհացոյց»-ում Վայոց ձորը հիշվում է «Վայու ձոր» ձևով (տե՛ս Աշ. Արրահամյան, Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 350, ձեռ. № 1717, 166ա): Մատենադարանի Ստ. Օրբելյանի ձեռագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրա աշխատության մեջ առավել տարածվածը «Վայույ ձոր» ձևն է:

10 «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», հաւաքեց եւ թարգմանեց Բազրատ Խալաբեանց «Հանդէս ամսօրեայ», 1903, № 4, էջ 125:

11 Տե՛ս Н. А. Караулов, Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане, Сборник материалов для описания местностей и племен Кавказа, XXXI, Тифлис, 1902, էջ 15—17:—«...построил крепость Вайс...»:

12 Տե՛ս «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», կազմեց Թ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 18:—«Հիմնեց նաև Վայուի բերդը, Սիսաջանի նահանգում կառուցեց բերդեր, որոնց մեջ Քիլարի բերդը և Շահրուդի բերդը (Շահապօնք — Բ. Հ.) և այլ բերդերը բնակեցրեց քաջարի մարտիկներով»:

13 Տե՛ս Баладзори, Книга завоевания стран, текст и перевод, перевод с арабского проф. П. К. Жузе, Баку, 1927, էջ 11:—Մորթմանը իր թարգմանության մեջ բերդանունը տալիս է «Վայխի բերդ» ձևով (Հատուածք պատմութեան Հայաստանի քաղեալք յարաբացի պատմագրաց, տետր Ա, 4. Պոլիս, 1874, էջ 19), իսկ Բ. Խալաթյանը սխալմամբ թարգմանում է «Վայոց (ձոր)» (Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, «Հանդէս ամսօրեայ», 1903, № 8, էջ 252—253):

Իբն Հաուրալը՝ թվարկելով Մարզուբանին հարկատու իշխանությունները, հիշատակում է Վայոց ձորի իշխանին՝ անվանելով նրան «Վայդուրի տեր»¹⁴։

«Վայդուր» անվանումը Վայոց ձոր անվան արաբական տառադարձությունն է։ Մեղ հայտնի են շատ աշխարհադրական տեղանուններ, որտեղ հայերեն «ձոր»-ը վեր է ածվել «դուր»-ի։ Այսպես, օրինակ՝ Ձաղեձոր-Ձանդեդուր, Աղավ-նաձոր-Այնադուր և այլն։ Արաբական հեղինակներից Աբու-Դուլաֆը, որը ճանապարհորդել է Հայաստանում և անձնասլես եղել է Վայոց ձորում, հիշատակում է Վայոց ձորի լեռները «ալ-Վայդուրի լեռներ» անունով¹⁵։ Կոստանդին Միրանաժինի մոտ Վայոց ձորը հանդես է դալիս *بایقور* անունով¹⁶, Ստեփանե Տրեթյուն «Գործոնի վկայաբանության»¹⁷ մեջ ու ալլ Վրաց հեղինակների մոտ «Վայձոր» և այլն։

Սկսած IX դարի վերջից, X և հետագա դարերում Վայոց ձորը՝ լայնորեն ընդգրկվելով քաղաքական իրադարձությունների մեջ, սկսում է ավելի ու ավելի հաճախակի հանդիպել մեր պատմագիրների՝ Շապուհ Բագրատունու, Թովմա Արծրունու, Մովսես Կաղանկատվացու, Հովհաննես Դրասխանակերտցու Ասողկի, Ստեփաննոս Օրբելյանի, Կիրակոս Գանձակեցու և այլոց երկերում¹⁸։ XIII—XV դարերում գրված բաղմամբիվ ձեռագիր հիշատակարաններ տեղեկություններ են տալիս թե՛ գավառի և թե՛ նրա իշխանական տների ու մշակութային կենտրոնների մասին¹⁹։ Այս հիշատակարաններում Վայոց ձորը անվանվում

14 *Տե՛ս* Н. А. Караулов, Сведения арабских географов IX и X веков по Р. Хр. о Кавказе. Армении и Азербайджане, Сборник материалов для описания местностей и племен Кавказа, XXXVIII, Тифлис, 1908, էջ 104։— «...Абу-Касима Вейдзурийца, правителя Вейдзура, он обязал на 50 000 динаров и дары...»։

15 «Вторая записка Абу-Дулафа», Москва, 1960, էջ 185а.—«Я прошел через горы ал-Вайзур...»։

16 Հ. Հյուրշման, Հին Հայոց տեղւոյ անունները, Թարգմանեց Հ. Բ. Պիլեգիկճեան, Վիեննա, 1907, էջ 225։

17 1. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատոր Ա, Երևան, 1934, էջ 91։

18 *Տե՛ս* Պատմություն Շապուհ Բագրատունու, էջմիածին, 1921, էջ 65, 81, «Թովմայի վարդապետի Արծրունու Պատմություն տան Արծրունեաց», Թիֆլիս, 1917, էջ 310, 311, 397, Մովսեսի Կաղանկատվացու Պատմություն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, էջ 380, Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտեցու Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 358—359, Ստեփաննոսի Տարօնեցու Ասողկան Պատմություն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 176, 256, «Պատմություն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելյան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 12, 14, 68, 69, 73, 143, 176, 197, 199, 234, 258, 263, 265, 298, 305, 306, 310, 337, 339, 342, 343, 348, 355, 360, 363, 364, 366, 396, 397, 404, 411, 428, 480, 511, Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 163, Ստեփաննոս եպիսկոպոսի տարեգրությունը, տե՛ս Հակոբյան Վ. Ա., Մանր ժամանակագրություններ (XIII—XVIII դդ.), Երևան, 1951, հատոր 1, էջ 50, Հովհաննես Ավագերեցի ժամանակագրությունը, տե՛ս Հակոբյան Վ. Ա., Նշված աշխատությունը, հատոր 2, Երևան, 1956, էջ 26, Գեղեվանքի Սոփիա իշխանուհու արձանագրությունը, «Մատանի էր անակն Վայոց ձոր, շինեցի զսա հւ եղի ակն ի վերայ» — տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, էջ 105, և այլն։

19 *Տե՛ս* Գ. Հովսեփյան, Յիշատակարանք ձեռագրաց, հատոր Ա, էջ 180, 928, Ե. Հակոբյան, Յուզակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, Թիֆլիս, 1915, պրակ առաջին, էջ 86, 522, Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 5, 99, 170, 245, 257, 261, 272, 297—298, 303, 369, 374, 378, Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, Երևան, 1955, էջ 301, 526, մասն Բ, Երևան, 1958, էջ 195, 346, 348, 375, 378, 427, Ղ. Ալիշանի իր «Սիսական» և «Հայապատում» աշխատություն-

է ոչ միայն «գաւառ», ույլեւ «երկիր» և «նահանգ», որն անշուշտ կապւած էր նրա քաղաքական դերի ածի հետ: Բացի այդ հանդես են գալիս նրա անվանման մի քանի տարբերակներ՝ Վայոյ ձոր, Վայո ձոր, Վայի ձոր, Վաու ձոր և այլն:

XIV—XV դարերում տեղեկներն էր զգացվում Վայոց ձոր անվանելու գլխավորապէս Արփա գետի հովիտը, շնայած որ մատենագիրները չեն դադարում ողջ գավառը Վայոց ձոր անվանելուց: Սկզբում Վայոց ձոր անվան հետ համահասարակ, այնուհետև նույնիսկ ավելի մեծ չափերով սկսում է օգտագործվել «Եղեգեաց ձոր» անվանումը, բայց և այնպէս նախկին անվանումը շարունակվում էր կիրառվել նաև հետագա դարերում: Առաքել Դավրիժեցին²⁰, Զաքարիա Սարկավազը²¹ և ուրիշներ հիշում են Վայոց ձորը կապւած Շահ Աբասի ավերիչ արշավանքների հետ: Իրենից մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ս. Էջմիածնի թեմերի մանրամասն ցուցակը, որը հրատարակել է Դյուտ քահանա Աղանյանը «Դիւան հայոց պատմութեան» 4 հատորում: Թեմերի տերիտորիալ բաժանման այս փաստաթուղթը, որը պատկերում է Սիմեոն Երևանցի կաթողիկոսի հովվապետութեան շրջանը, ունի մի շատ հետաքրքիր տեղեկություն: Թվարկելով Նախիջևանի թեմին ենթակա գավառներն ու շրջանները, նա Վայոց ձորն ու Եղեգեաց ձորը հիշատակում է իրար կողքի, բայց առանձին-առանձին: Սա արդեն ցույց է տալիս, որ Եղեգիս գետի հովիտը այս ժամանակաշրջանում դիտվում էր որպէս «Եղեգեաց ձոր», իսկ Արփա գետի հովիտը՝ «Վայոց ձոր»²²:

Հետագա շրջանում այս անվանման օգտագործումը դառնում է խիստ հազվագեղ²³ և վերջապէս կիրառութեան մեջ է մտնում առավելապէս XIX և XX դարերի հայ ուսումնասիրողների կողմից:

Սակայն ի՞նչ է նշանակում «Վայոց ձոր»-ը, ե՞րբ և ինչպե՞ս է առաջացել այդ անվանումը:

Արդեն միջնադարում մի շարք հայ հեղինակներ փորձել են տալ այդ անվան առաջացման պատմությունը: Ըստ Ստեփաննոս Օրբելյանի տեղեկությունների անգամ Սյունյաց եպիսկոպոս Ստեփաննոսը, ամռանը շրջագայելով իր եպիսկոպոսապետութեան 12 գավառներում և քարոզելով «զբանն ճշմարտութեան», գալիս է հոգևոր հարկի պատճառով «... ի գաւառս բարելից ի ձորն Եղեգեաց յաւանն Մոզան»: Այդ ավանում բնակվում էր մի սեղեխ կին, որին եպիսկոպոսը բաղմիցս զգուշացրել էր հեռանալու իր վատ բարքից, սակայն վերջինս զգուշացումները հաշվի չէր առել, իսկ եպիսկոպոսը խիստ յայրաջած գնում է «Աւագակն» կոչվող աղբյուրի մոտ, աղոթում է երկար ժամանակ և ննջում: Իսկ այդ

ների մեջ հրատարակել է մի շարք հիշատակարաններ, որոնք է. Խաչիկյանը վերահրատարակել է իր վերոհիշյալ աշխատություններում (Հ. Բ.):

20 Տե՛ս «Պատմութիւն Առաքել Վարդապետի Դարիժեցոյ սակս դիպուածոց Հայաստանիայց եւ գաւառին Արարատայ և մասին Գողթան գաւառի սկսեալ ի ՌՄԱ թուականին Հայոց մինչ ի ՌՃԺԱ թ.», Վաղարշապատ, 1896, էջ 217:

21 Տե՛ս Զաքարեայ Սարկավազի Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870, էջ 60, 126, 137:— Խաչիկի դուստր արքայեցի Աղիգի նահատակութեան մասին հատվածը հրատարակել են նաև Ղ. Ալիշանը իր «Սիսական» աշխատության մեջ (էջ 184), որտեղ նա Աղիգի նահատակությունը դնում է 1679 թ. (իսկականը 1668—1669 թթ.) և Հ. Մանանդյանն ու Հ. Աճառյանը «Հայոց նոր վկաներ»-ի մեջ (էջ 488):

22 «Դիւան հայոց պատմութեան», դիրք Գ, Թիֆլիս, 1894, էջ 802:

23 Հ. Ոսկյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, հատոր Բ, Վիեննա, 1963, էջ 280:

անառակ կինն առնելով իր հոմանուն գալիս է նրան սպանելու։ Սակայն հոմանին չի կարողանում նրան սպանել՝ իւր թե աղբիւնով նրա սրբութիւնից։ Դրանից խիստ շարացած այդ սեղեխ կինը ինքն է սպանում եպիսկոպոսին։ Առավոտյան, սպանութեան լուրն առնելով, հոգևոր պաշտոնյաները մեծ ողբով նրա դիակը տանում են դհպի Սիոն լեռան մոտ գտնվող սուրբ մենարանը։ Ծանապարհին Արկազն գլուղի ավազների խնդրանքով նրան թաղում են Սուրբ Քրիստափորի սենյակում։ Բեր այդ ուժիրը՝ սպանութիւնը, խիստ զայրացնում է աստրծուն և «Ապա յանկարծակի նհաս ի վերուստ պատուհաս Տեառն. և կալա խաւար շօշափելի զգաւառն ամենայն զաւուրս 40, և շարժումն և դղրդումն սաստիկ. զի եռայր երկիրն ահեղ դողացմամբ յանդնդոց և բարձրանայր մինչև ի վեր և անդէն իբր զալիս ծովու փլուզանիր. լերինք տապալէին, վէմք ի հիմանց բակտէին, տունք և ապարանք զեղեցիկք լինէին զերեզմանք բնակչաց. աղբիւրք խցէին. գետք կորնչէին. և ամենայն տեղի երեւէր տատանմամբ. և ձայնք մարդկեղէն բարբառոյ լսելի լինէին ի ներքուստ յանդնդոց և ի վերուստ յօդոց «Վայ ձոր, վայ ձոր»։ և կենդանւոյն ընկղմեցան ողիք իբրև 10000, զորս գիտէին և ի թիւ արկին. և զանձանթիցն ոչ ոք գիտեր զհամարն. յաղագս որոյ կոչեցաւ անուն գաւառին Վայոց ձոր»։ 40 օրն անցնելուց հետո տեղի վանականները հայոց կաթողիկոսի հետ միասին եպիսկոպոսի նշխարները տանում են և թաղում Թանահատի վանքում։ Ըստ Օրբելյանի այդ դեպքը պատահել է հայոց թվականության 184(735) թվի հուլիսի 21-ին²⁴։

Վայոց ձորի անվան առաջացման վերաբերյալ այս ավանդութիւնը պարզապես սովորական մի առասպել է, որն առաջացել է «Վայոց ձոր» անվան ստուգաբանության հոդի վրա։ Հենց միայն այն հանգամանքը, որ «Վայոց ձոր» անունը հիշատակվում է V դարի հայ պատմիչների կողմից, ցույց է տալիս, որ գալառն իր այդ անունը չէր կարող ստանալ VI-VI դարում։ Պարզ է, որ Վայոց ձորի անվան առաջացման վերահիշյալ բացատրութիւնը անընդունելի է։

Բազմաթիվ ուսումնասիրողներ իրենց աշխատութիւններում անդրադարձել են «Վայոց ձոր» անվան ստուգաբանությանը²⁵։ Գիտական բնույթ ունի Ղ.

24 Ստ. Լ. փաննոս Օրբելյան, Պատմութիւն Նահանգին Սիսական, էջ 139—143։ Վայոց ձորի անվան առաջացման այս պատմութիւնը հաղորդում են նաև Մովսէս Կաղանկատվացին. «Նւ ազդեալ ի գաւառն զգալ բարկութեանն! բողոքէ կալ յաղօթս և ի վերուստ խաւար անտեսանելի կալաւ զՄողանն սահման, և զաւուրս քառասուն շարժեցաւ վայրն և խորասոյզ եղեալ ընկղմեցան կենդանւոյն հոգիք իբրև տսւն հաւար։ Վասն այնորիկ Վայոց ձոր անուանեցաւ» («Պատմութիւն Աղուանից աշխարհի», էջ 365—366), Մխիթար Այրիվանեցի (տե՛ս Մխիթարայ Այրիվանեցի Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 52 և Գ. Հովսեփյան, Մխիթար Այրիվանեցի. Երուսաղեմ, 1931, էջ 21—22), Կիրակոս Գանձակեցի (տե՛ս «Պատմութիւն Հայոց», 1961, էջ 74—75) և այլն (տե՛ս Հ. Տաշյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 45, Ստեփանոս Սիւնեցի և Սահակդուխտ, «Բազմավեպ», 1862, № 7, էջ 195)։

25 Դեռևս իր ժամանակին Հ. Ինճիճյանը՝ անդրադառնալով Ստ. Օրբելյանի հաղորդած ավանդութիւնը, դրել է. «... և արդարև նոյն իսկ անունն յայտ առնէ՝ թէ սակս սգալի անցից ինչ հոչեցաւ այսպէս. բայց վրիպակ ժամանակագրութեան՝ զնել զայն յետ մահուան Ստեփաննոսի եպիսկոպոսի՝ որ ի Ը դարուն. զի սովին անուամբ յիշին զայս գալառ խորենացին, Եղիշ և Ղազար՝ որ էին ի Ն դարուն՝ բազմոք յառաջ քան զՍտեփաննոս»։ Փաստորեն նա ընդունում է «Վայոց» անվան «ողբ», «կոծ» իմաստը և. հաշտեցնելու համար այդ անվան հիշատակութիւնը V դարի հայ հեղինակների կողմից նրա իմաստի հետ, փորձում է երկրաշարժի վերաբերյալ այս պատմութիւնը տեղափոխել դեպի վաղ դարեր (Հ. Ղ. Ինճիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 255)։

Ալիշանի մեկնաբանությունը: Նրա կարծիքով գավառն իր անունն ստացել է Վայկուն ելուզակի տոհմի անունից, որի անվամբ կոչվել է նաև Արցախի գավառներից մեկը: Նա հնարավոր է համարում նաև այն, որ դա ըստ երևույթին բերդի կամ իշխանական աթոռանիստի անուն էր, որը հետագայում տարածվեց ողջ գավառի վրա: Չնայած, ըստ նրա, հայկական աղբյուրները չեն հիշում նմանօրինակ բերդի մասին, այնուամենայնիվ այն հիշատակվում է արաբ հեղինակների մոտ «Հսնի Վայս — حصن وايس» անունով և քանի որ չի հիշվում որևէ այլ աթոռանիստ Վայոց ձորում, ապա կարելի է ենթադրել, որ նա եղել է գավառանիստ կենտրոն²⁶: Ղ. Ալիշանի կողմից Վայոց ձորի անվան կապելը Վայկուն ելուզակի, ինչպես նաև Վայս ամրոցի անունների հետ մի նշանակալից քայլ է անվան բացատրության մեջ:

Վայոց ձորի տեղագրող Քաջբերունին գտնում է, որ գավառի անունը չէր կարող առաջանալ VIII դարում, քանի որ հիշվում է V դարի հայ պատմիչների կողմից: Այնուհետև նա բերում է կարապետ Շահնազարյանցի տեղեկությունն այն մասին, որ Վայու է կոչվում սանսկրիտ լեզվով քամու աստվածը, բայց դրանից առանձին հետևություն չի անում (Քաջբերունի, Ճանապարհորդական նկատողությունք, «Փորձ», 1877/78, № 4, էջ 351, տե՛ս նաև Ստեփանյան Օրբելյան, Պատմություն նահանգին Սիսական, Փարիզ, 1859, հատոր Ա, № 36 ծանոթություն): Համարյա միանման կարծիք է հայտնել նաև ազգագրագետ Եր. Հայայանը («Ազգագրական հանդես», XII, Թիֆլիս, 1905, էջ 250), իսկ ականավոր հայագետ Հ. Հյուբշմանը՝ անապահով համարելով հանդերձ Վայոց ձոր անվան վերահիշյալ ստուգաբանությունը, ոչ մի կոնկրետ պատասխան չի տվել այդ հարցին (Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղւոյ անունները, էջ 407):

Ուրարտեներ հայերենով կարդալ փորձող Հ. Սանդալյանը ուրարտական սեպագիր արձանագրություններում կարդում էր Uas կամ Huas մի աստծու անուն, որը ըստ նրա պետք է լինի հողմերի աստված, որին նվիրված է եղել Վայոց ձոր գավառը, որը նրա անունով կոչվել է Huaina, այսինքն Huas-ի երկիր (pays de Huas): Հեղինակը հավանական է համարում, որ Վայոց ձորի ժողովուրդը կոչվել է Huai, այսինքն Huas աստծու երկրպագուներ: Նրա կարծիքով ժամանակի ընթացքում այս Huas ձևը կդառնար Hay և Hayk = Հայ և Հայք և ապա կընդհանրանար ամբողջ ազգի վրա (J. Sandaljan, Histoire documentaire de l'Arménie des ages du Paganisme (1410 av.—305 apr. J. C.) I, էջ 123—125): Անվիճելի է, որ այս բացատրությունը հիշտ լինել չի կարող, որովհետև ի բաց առյալ Huas ընթերցման կասկածելի լինելը Սանդալյանը հույց չի տալիս, թե ինչու Huas-ը պետք է լինի Վայոց ձորը և ոչ թե այլ գավառ (Ա. Խաչատուրյան, Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն, Երևան, 1933, էջ 43—44):

Ակադ. Ա. Ղարիբյանը նույնպես փորձել է կապ տեսնել «Վայոց ձոր» անվանման և սեպագիր արձանագրություններում հիշատակված «Ուալ» աստծու կամ «Ուայուս» երկրանվան միջև, սակայն նա չի ժխտում նրա էթնիկական ծագումը (Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն, Երևան, 1937, էջ 62):

Արդի վերծանության մեջ. «D-u-a II GUD IV UDU»-ը, որի թարգմանությունն է «Ուա աստծուն 2 ցուլ (և) 4 խոյ...» [Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, Москва, 1960, էջ 143 (ուրարտական տեքստը), 147 (թարգմանությունը)], աստվածությունը հանդես է գալիս Ua և ոչ թե Huas ձևով: Բայց հետաքրքիրն այն է, որ այդ աստվածությունը գրավում էր աստվածների շարքում VI տեղը և զբաղեցնում VI տողում: Մեր կարծիքով Վայոց ձոր գավառի աստվածը հազիվ թե այդպիսի բարձր դիրք ունենար ուրարտական աստվածների պանթեոնում: Եվ վերջապես խիստ կասկածելի է այն ենթադրությունը, թե ուրարտացիները իշպուինի և Մենուայի ժամանակ արդեն տիրել էին Վայոց ձորին:

²⁶ Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 91:— Ի. Շոպենը՝ անվերապահորեն ընդունելով Ստ. Սրբելյանի բերած ավանդության ճշտությունը և կսպ տեսնելով Վայոց ձոր ու Վայկունիք գավառների անվանումների միջև, նույնացրել է այդ գավառները, որն անտարակույս կոպիտ սխալ է, քանի որ VII դարի «Աշխարհացոյց»-ը գրանք հիշում է առանձին-առանձին՝ Սյունիք և Արցախ աշխարհներում (տե՛ս [I. Шопен, Исторический памятник состояния Армянской области, СПб, 1852, էջ 258—259, 330):

Միակ գիտական բացատրությունը տալիս է նշանավոր հայագետ Գր. Ղափանցյանը, որի կարծիքով Վայոց ձորի անունը մեենից առաջ պետք է դիտել որպես էթնիկական անուն²⁷ և ոչ թե «վայերի (ողբերի)» ձոր իմաստով: Ըստ նրա Վայոց ձորում ապրել է *vay* ցեղը, որը նա կապում է հինավուրց *biai* կոչվող ժողովրդի հետ, որն իր անունը տվել է պատմական *Biajnili*-ին, այսինքն Ուրարտուին: Ուրարտական արձանագրություններում նրանց երկիրը կոչվում է *Biajnili*, որտեղ *bia*-ն արմատն է, իսկ *-jnili*-ն վերջածանց: Նույն կարծիքն են հայտնել նաև Յ. Ֆրիդրիխը (J. Friedrich) և Ա. Գյոթցեն (A. Gotze): Ֆրիդրիխն անգամ *Biaina*-ն (*Biajnili*) թարգմանել է «*Biaisches land*» ձևով: Ուրարտա-հայկական լեզվական օրինաչափությունների համաձայն *bia*-ն վերածվում է հայկական *va*-ի (տե՛ս *Biajnili*=*Van*), իսկ *bia(i)*-ն *vay*-ի: Շարունակելով իր միտքը զարգացնել Գր. Ղափանցյանը գտնում էր, որ այդ անունը պահպանվել է Վայոց ձոր (*Vay-oc dzor*) գավառի անվան մեջ և որ այդ *bia*-նե-րը եղել են տեղաբնիկ ցեղ մինչև ուրարտացիների Վան գալը: Վայոց ձոր աշխարհագրական անունը նույնպիսի էթնիկական բնույթ ունի, ինչ Հայոց ձորը: Ըստ ձևի *Vayoc dzor*-ը և *Hayoc dzor*-ը լրիվ հայկական են, որտեղ *Vayoc*-ը և *Hayoc*-ը *vay*-ի և *hay*-ի հոգնակի թվի սեռական հոլովն են: Զուտ հայկական է նաև *dzor* բառը: Հետևաբար, ըստ Գր. Ղափանցյանի սա արդյունք է տեղական ուրարտական և այլ անվանումների ու շրջանի հայացման: Ըստ նրա տեսականորեն *Hayoc dzor*-ի փոխարեն ուրարտերեն կլինեի *Haatar*, ինչպես օրինակ ուրարտական *Širimutar*-ը հայերենում դարձել է *Սերեմաձոր*²⁸:

Վանի Սուրբ Սահակ եկեղեցում գտնվող արձանագրության մեջ (այս արձանագրությունը վերականգնված է ըստ «Խորխոռյան ժայռ»-ի Արգիշտի I-ի թողած արձանագրության) հիշվում է *Bia* երկիրը²⁹: Այս *Bia*-ն կարող էր դառնալ *Vay*, սակայն սա հազիվ թե կարող է վերաբերվել Վայոց ձորին, քանի որ արձանագրության կոնտեքստի համաձայն այն պետք է գտնվեր Տայքին հարակից շրջաններում կամ հենց բուն Տայքում: Անշուշտ դրա հետ մեկտեղ չի բացառվում, որ այս *Bia* երկրի ցեղը կամ Վանի շրջակայքի *Biai*-ները կարող էին գաղթել և բնակվել Վայոց ձոր գավառում ու նրա շրջակայքում:

Մեր ուսումնասիրությունը Վայոց ձորի անվան ծագման վերաբերյալ մեզ բերեց լիակատար այն համոզման, որ այն առաջացել է «Վայ» ցեղանունից: Այդ ցեղը իր անունն է թողել բավաբանի տեղանունների մեջ, որոնք մեզ հնարավորություն են տալիս ճիշտ կերպով որոշելու նրա տարածման սահմանները:

Այդ տեղանուններից է դեռևս արաբ հեղինակների կողմից հիշատակված Վայս ամրոցը: Վայոց ձորի ուսումնասիրողներից ու տեղագրողներից և ոչ մեկը

²⁷ Վայոց ձորի անվան առաջացման ավանդությանն անդրադառնալով պրոֆ. Թ. Հակոբյանը այն համարել է կամայական և անհամոզեցուցիչ, իսկ Վայոց ձոր անունը որպես էթնիկական անվանում (Թ. Հակոբյան, Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, Երևան, 1960, էջ 9, 75):

²⁸ Տե՛ս Գր. Капанцян, Историко-лингвистическое значение топонимики дрезней Арменин, Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ, 1940, հատոր XIV, էջ 384—385: Տե՛ս նաև, Գր. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 20:

²⁹ Տե՛ս Գ. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, էջ 212, 235 — «Дошел (?) я до страны Биа... (до) страны Хушани. Выступил я (в поход) против страны Диди, против города Зуа: город Зуа, царский город (страны) Диаухи я сжег, поставил я надпись в городе Зуа... [այնուհետև հիշվում է Աշկալաշի երկրի Շաշիու քաղաքի և այլ բնակավայրերի նվաճումը (Հ. Բ.)]»:

չի փորձել տեղագրել այն³⁰։ Տանձիկ գյուղից դեպի հարավ-արևելք, Արփա գետի ձախ ափին մի բարձր քարաժայռի վրա մինչև այժմ պահպանվել են մի անհայտ բերդի ավերակները, որոնք կոչվում են Վեյսալլի կալասի։ Վայոց ձորի տեղանքն ուսումնասիրելիս մեզ չհաջողվեց անմիջականորեն լինել այդ բերդատեղում, որն ինձ հեռվից ցույց տվեցին մի խումբ խաչիկցի գյուղացիներ։ Բերդի դիրքը և ներկայիս անվանումը այլևս ոչ մի կասկած չեն թողնում, որ դա պատմական Վայս ամրոցն է, որի անունը վերածվել է «Վեյսալլի կալասի»-ի տեղացի մահմեդականների ժողովրդական ստուգաբանության հետևանքով։ Բերդը տիրող դիրք ունի Վայոց ձորի հարավ-արևմտյան տերիտորիայի ու Շարուրի դաշտի վրա և փաստորեն հանդիսանում է Վայոց ձորի մուտքը փակող ամրություն։ Մեր կարծիքով, բերդի ստորոտի դաշտի «Վեյսալլի» անվանումը պետք է բացատրել նրանով, որ այդտեղ հավանաբար եղել է Վայս անունով մի գյուղ։ Հետևաբար, առավել տրամաբանականն այն է, որ բերդն իր անունն ստացել է ոչ թե անմիջականորեն ցեղի անունից, այլ գյուղի։ Որ գյուղանունը կարող է պահպանվել որևէ հանդամասի անվան մեջ, ապացուցվում է բազմաթիվ օրինակներով։ Հինավուրց Հավու գյուղի անունը մնացել է Հավու մեշա (Հավու անտառ) հանդամասի վրա, Աղդարա՝ այժմ անմարդաբնակ գյուղի անունը Աղդերե հանդամասի վրա և այլն։

Վայոց ձորում, մեր կարծիքով, կա նաև մեկ այլ բնակավայր (այժմ ավերակ գյուղատեղ), որի անվանումը կապված է «Վայ» ցեղանվան հետ։ Այժմյան Սալլի և ներկայումս անմարդաբնակ Շահգյալդի Ղշլաղ գյուղերից դեպի հարավ գտնվում է մի հինավուրց գյուղատեղ, որի անունն է Վախսե։

Թե Քաջբերունին և թե Ղ. Ալիշանը անծանոթ են այդ գյուղի պատմությանն ու հնություններին³¹։ Գյուղի անունը չի հիշատակվում ոչ Ստ. Օրբելյանի Տաթևի վանքին հարկատու գյուղերի հին ցուցակում և ոչ էլ մեզ հայտնի որևէ այլ գրություն մեջ։ Մեր կարծիքով, Վախսե գյուղանվան սկզբնական ձևը պետք է լիներ Վայկը կամ Վայք, ըստ որում առավել հավանական է, որ նրա կիրառական ձևը հանդես գար հայցական հոլովով՝ Վայկս կամ Վայս։

Ինչպես ցույց է տալիս հայերեն անվանումների աղավաղման օրինաչափությունը, հայերեն «կ» հնչյունը ադրբեջաներենում վերածվում է «խ»-ի։ Նման օրինակները շատ են, բայց մենք կբերենք միայն երկուսը։ Վայոց ձորի Ակոռի գյուղը այժմ կոչվում է Ախուրա³², իսկ պատմական Կապան գավառը XVIII դարում կոչվել է Խափան³³։ Այսպիսով, Վախսեն պետք է դիտել որպես Vakse, բայց մեզ հայտնի է, որ «այ» երկհնչյունը ժամանակի ընթացքում փոխվում է «ա»-ի, ուստի «Վախսե»-ի սկզբնական ձևը պետք է լիներ Վայկսե = Vaikse։ Թե հենց այսպես է կոչվել հնում այդ գյուղը կամ մի քիչ այլ կերպ, էությունը չի

³⁰ Քաջբերունին («Փորձ», 1877/78, № 4, էջ 327—328) և Իր. Հալալյանը («Ազգագրական հանդես», XI, էջ 261)՝ նկարագրելով Վեյսալլի կալասի բերդի ավերակները, նշում են, որ բերդի պատմական անունը իրենց հայտնի չէ։ Ղ. Ալիշանը («Սիսական», էջ 205) տալով բերդի նկարագրությունը գրել է. «Մի՞ այսոքիկ արդեօք իցեն մնացուածք հուշակաւոր բերդիցն Վայոց և Հրա-սեկայ և Անապատն բերդ»։ Այսպիսով, շնայած մեծ վերապահությամբ, Ալիշանը հակված է կարծելու, որ Վայս ամրոցը պետք է տեղագրել Վեյսալլի բերդատեղում։

³¹ Տե՛ս Քաջբերունի, «Փորձ», 1879, № 1, էջ 103 և Ղ. Ալիշան, Սիսական, էջ 161։

³² Այդպես է կոչվում նաև Մասիսի ստորոտում գտնվող Ակոռի գյուղը։

³³ «Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին եւ պատերազմաց հայոցն Խափանու», Վաղարշապատ, 1811։

փոխում: Բավական մեծ վստահությամբ կարելի է ասել, որ այն կապ ունի Vay էթնիկական անվան հետ:

Վայոց ձորում Vay ցեղանվան հետ կապված այլ բնակավայրի անուն գոտնել մեզ չհաջողվեց: Սակայն նման տեղանուններ շատ կան հարևան գավառներում: VII դարի «Աշխարհացոյց»-ում Արցախ աշխարհի գավառների մեջ հիշվում է Վակունիքը³⁴: Անտարակույս սրա նախնական ձևը պետք է լիներ Վայկունիք, ինչպես ուղղված է ակադ. Ս. Երեմյանի կողմից, որովհետև այս գավառը հիշվում է հետագայում միայն Վայկունիք ձևով: Մովսես Խորենացին իր աշխատության մեջ բերում է մի հետաքրքիր պատմություն այն մասին, թե ինչպես Տիգրան Մեծի ժամանակ, երբ վերջինս պաշարել էր Պտղոմայիդ քաղաքը, «...Վայկուն ոմն անուն յելուզակ խռովէր զերկիրն Հայոց, զլեառն ամուր կալեալ, որ մինչև ցայժմ յանուն յելուզակին կոչին Վայկունիք»³⁵: Ակադ. Հ. Մանանդյանի կարծիքով Խորենացու մոտ Լուկուլլոսի կերպարը արտահայտված է Վայկուն ելուզակի անունով, որը խախտել էր Հայոց երկրի խաղաղությունը և հարկադրել Տիգրանին վերադառնալու Պտղոմայիդ քաղաքից Հայաստան³⁶: Գուցե՝ իրոք Վայկուն ելուզակի պատմության մեջ մասնակիորեն արտացոլվել է Լուկուլլոսի հայաստանյան արշավաւեր, սակայն, մեր կարծիքով, մենք այստեղ գործ ունենք նաև տեղական ընդվզումների հետ: Վայկուն ելուզակը անկասկած Վայ ցեղի էպոնիմն է, ինչպես Հայկը՝ հայ ցեղի, Արմենակը՝ արմեն ցեղի և այլն³⁷: Ձևայած այդ ժամանակ հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը հիմնականում ավարտված էր, այնուամենայնիվ բացառված չէ, որ որոշ ցեղեր այս կամ այն քաղաքական իրադրության պայմաններում կարող էին հանդես բերել անջատողական ձգտումներ և հանդես գալ կենտրոնական իշխանության դեմ: Եթե Սյունյաց աշխարհի բնակչությունը անգամ V դարում որակվում էր որպես վայրենաբարո ժողովուրդ, ապա միանգամայն պարզ կլինի, թե ինչպիսին կլինեին այդ վայերը մեր թվականությունից առաջ I դարում, երբ նրանց գործողությունները համարվել են ելուզակային:

Վայկունիք տեղանունը մենք դիտում ենք Vay-k-uni-k՝ ձևով, որտեղ vay-ը ցեղանունն է, «k»-ն ցեղային պատկանելիություն, իսկ uni-ն ուրարտական տեղանուն ցույց տվող մասնիկ, «n»-ն հոգնակիի նշանն է, որը միաժամանակ հայկական տեղանուն ցույց տվող մասնիկ է: Տեղանվան կառուցվածքային տեսակետից ելնելով կարելի է կատարել հետևյալ ենթադրությունը: Քանի որ k-ն հնդեվրոպական մասնիկ է (Հայկ-կ, Արմեն-ակ, Մանդա-կ, պարս-իկ և այլն) և նախորդում է ուրարտական uni-ին, ապա հնդեվրոպական ցեղերը ապրել են

³⁴ «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացու», Վենետիկ, 1881, էջ 33 (զՎակունիս): Ա. Գ. Արաբաբյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 350 (Վակունիք): Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 109 (զՎայկունիս):

³⁵ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 129: Տե՛ս նաև, Բաբգեն Կյուլեբսերյան, Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային մատենադարանի հայոց, Անթիիաս, 1961, էջ 199: «Տիրան որդի նորա (Արտաշեսի) ամս լԳ. Սա՛ ոչինչ ընթատի հօրն քաջութեան առնել արիութիւնս, բայց դարձեալ եղեւ երկրորդ Պարսից: Առ սովաւ Վակուն յելուզակ, յորմէ լեառն Վակունիք»:

³⁶ Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր Ա, Երևան, 1944, էջ 189:

³⁷ Ինչպես իրավացիորեն ենթադրում է Գր. Ղափանցյանը, «կ»-ն կամ «ակ»-ը ցույց է տալիս ցեղային պատկանելիություն. Հայկ=հայ ցեղի ներկայացուցիչ, Արմենակ=արմեն ցեղի ներկայացուցիչ և այլն: Հետևաբար Վայկուն պետք է նշանակի «վայ» ցեղի ներկայացուցիչ:

այս շրջաններում մինչև ուրարտական նվաճումը: Այն առարկությունը, թե հայերենն այնպես էր յուրացրել ուրարտական -սու մասնիկը, որ շատ անգամ վերջինս կիրառվում էր ոչ անհրաժեշտ դեպքերում, որոշ իմաստով հիմքեր ունի: Բազմաթիվ նախարարական տների անունները դրա վառ օրինակն են հանդիսանում. Amatuni, Mandakuni և անգամ Mamiguni կամ Mamguni: Հետևաբար ըստ այդ առարկության -սու-k' մասնիկը կարող էր տրվել հայերի կողմից: Եթե Վայկունիք գավառը անմիջականորեն չի հիշատակվում ուրարտական արձանագրություններում, ապա մեկ այլ գավառի հիշատակությունը գալիս է հաստատելու մեր միտքը: Ուրարտական արձանագրությունների Velikuni=Velik-uhı երկրանունը դիտելով Vel-i-k-uni=Vel-i-k-uhı ձևով, մենք տեսնում ենք, որ նա կառուցվածքային տեսակետից խիստ նման է Վայկունիքին: Հետևաբար միանգամայն հնարավոր է, որ Vay-երն էլ Vel-երի պես եղել են հնդեվրոպական ցեղ: Զպետք է բացառել նաև այն հանգամանքը, որ Վայ ցեղը Վայոց ձոր և նրա շրջակա գավառները բերած լինեին ուրարտացիները Bıa երկրից, բայց այս հարցը դեռ խիստ մութ է և կարող է հաստատվել կամ ժխտվել միայն նոր նյութերի հայտնագործման շնորհիվ: Վայոց ձոր անվան համադրումը Հայոց ձոր անվան հետ որոշ իմաստով ենթադրել է տալիս վայերի հայկական ցեղ լինելը:

Խիստ սխալ և անիմաստ է Վայկունիքի նույնացնելը Վայոց ձորի հետ³⁸, Վայկունիք գավառը, ինչպես ճիշտ տեղադրում է ակադ. Ս. Երեմյանը, գտնվում է Թարթառ գետի վերին հոսանքում «Բաղանիք արքունականք» կամ այժմյան Իստիսուի շրջանում և միջին դարերում կոչվում էր «Ծար» կամ «Սարայ երկիր»³⁹:

Վայկունիք գավառը հիշատակվում է նաև Մովսես Կաղանկատվացու կողմից «Վերին Վայկունիք» անվամբ⁴⁰: Սա ինքնըստինքյան ենթադրել է տալիս ներքին Վայկունիքի գոյությունը: Հավանաբար գավառների մանրացման հետևանքով, ինչպես այդ տեղի էր ունենում Սյունիքում, Վայկունիքը բաժանվել էր երկու մասի՝ Վերին և ներքին Վայկունիքների: Մ. Կաղանկատվացին հիշում է նաև Վայկունիք անունով գյուղ Վայկունիք գավառում⁴¹:

Ի. Շոպենը հիշում է Вайхир անունով գյուղ նախիջևանի մահալում և Вайхир Суфла ու Вайхир Улия Շարուրում⁴²: Գերմանացի ճանապարհորդ Ռադդեն եղել է նախիջևանի Վայխիր գյուղում և նկարագրել այն⁴³: Վերոհիշյալ գյուղանունների մեջ նույնպես պահպանված է «Վայ» ցեղանունը: Թե ինչպե՞ս է եղել գյուղանվան սկզբնական ձևը, մենք դժվարանում ենք որոշակիորեն ասել: Գուցե՞ Վայխոռ, Վայկոր, Վայձոր, կամ Վայծոր: Մեզ առավել հավանական են թվում Վայխոր և Վայկոր ձևերը, որոնցից հետագայում կարող էր հանդես գալ Վայխիր ձևը: «Կոր» բառով կազմված գյուղանուններ հանդիպում են Սյու-

38 И. Шопен, Исторический памятник состояния Армянской области, էջ 72:

39 Ս. Ս. Երեմյան, Հայաստանի ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 82:

40 Տե՛ս Մովսես Կաղանկատվացի, էջ 376:

41 Նույն տեղում, էջ 389:—«...և զապարանս իր զն է ի դիւղն, որ կոչի Վայկունիք, ուր և Բաղանիքն են արքունականք»: Երևանի Մ. Մաշտոցի անվան մատենադարանի № 6520 ձեռագրում նույնպես այս գյուղը հանդիպում է վերոհիշյալ անունով (74ր):

42 И. Шопен, Исторический памятник состояния Армянской области, էջ 491:

43 Ռատտ է, Նոր ուղեւորութիւն ի բարձրաւանդակս Հայոց, «Բաղմավեպ», 1874, պրակ Ա, էջ 11:

նիքի որոշ գավառներում: Դրանցից կարելի է նշել Դեղձկոր և Հուլնոցկոր գյուղանունները: Որ «կոր»-ը նշանակում է ձոր, հեշտությամբ ապացուցվում է նրանով, որ որոշ ձեռագրերի «Գյուղացուցականներում» Դեղձկորը հիշվում է Դեղ-ձաձոր ձևով⁴⁴:

Վերոհիշյալ տեղագրական նյութերը անշուշտ արդեն բավարար են որոշ եզրակացությունների հանգելու համար, սակայն մեզ թվում է, որ մի քանի գյուղանուններ ևս գալիս են հաստատելու մեր տեսակետը: Ստ. Օրբելյանի աշխատության թե՛ հրատարակության և թե՛ ձեռագրերի մեջ հանդիպում են Վաժանիք, Վաժունիք, Վաժոց, Վաժնատուք և Վժնաբերդ գյուղանունները: Նրե-վանի մատենադարանի № 2868 ձեռագրի գրիչն անդամ փորձ է արել ծանոթագրության մեջ դրանցից մի քանիսը սրբագրելու Վարժունիք, Վարժնունիք, Վարժնունիք և Վարժոց ձևերով⁴⁵: Ձեռագրերում եղած այդ գյուղանունների տարբերակները խիստ շնչին չափով են իրարից տարբերվում: Վաժանիք-Վաժո-նիք-Վաժունիք: Տաթևի վանքին հարկատու գյուղերի հին ցուցակի ուշադիր քննությամբ մեզ բերեց այն համոզման, որ գրիչները, ըստ երևույթին, շփոթել են «ժ» և «յ» տառերը: Դրանք իրարից առանձնապես շեն տարբերվում և «յ»-ի մի քիչ բարձր գրվելու դեպքում այն կարելի է շփոթել «ժ»-ի հետ: Եթե վերո-հիշյալ գյուղանուններում մենք անմիջականորեն չենք կարող ապացուցել «յ»-ի «ժ»-ի փոխարկման փաստը, ապա այդ կարող ենք ցույց տալ խորժայ գյուղան-վան համար: Մի շարք ձեռագրերում այդ գյուղանունը հանդես է գալիս «խոր-ժայ», իսկ մյուսներում «խորեայ» ձևով: Ակնհայտ է, որ բավական է գրիչը սխալմամբ գրեր «խորյայ» և բառամիջի «յ»-ն էլ գրեր մի քիչ բարձր, ապա այն կկարգացվեր «խորժայ» ձևով: «Յ»-ի «ժ»-ի փոխարկման պրոցեսը բացատրե-վում է, ըստ մեզ, նաև մեկ այլ հանգամանքով: Միջնադարում, երբ արդեն «վայ» տերմինի ազգացեղային (էթնիկական) իմաստը չէր գիտակցվում, երբ «վայ»-ը հասկացվում էր միայն «ողբ, կոծ» իմաստով, գրիչները այդ գյուղա-նունների «յ»-ն սրբագրել են «ժ»: Հետևաբար, շատ հնարավոր է, որ վերը նըշ-ված գյուղանունների սկզբնական ձևը եղել է Վայանիք⁴⁶, Վայունիք⁴⁷, Վայոց⁴⁸, Վայնատուք⁴⁹, Վյնաբերդ⁵⁰ = Վայնաբերդ: Չնայած այս ենթադրության տրա-մաբանական հնարավորությանը, մեր կարծիքով այն պետք է ընդունել մեծ վե-րապահությամբ:

Այժմ, երբ մենք աշխատեցինք վեր հանել «վայ» ցեղանվան հետ կապված բոլոր մեզ հայտնի տեղանունները, իրավացիորեն հարց է առաջ գալիս, թե ինչ տերիտորիայի վրա էր ապրում այդ ցեղը: Մենք հեռու ենք այն մտքից, թե նրա զբաղեցրած տերիտորիան ընդգրկում էր վերոհիշյալ բոլոր բնակավայրերի շրջանը: Մեր կարծիքով, Վայոց ձորի, Վայկունիք դավառի (Թարթառ գետի վե-

44 Ձեռ. № 6546, 85ա, № 7503, 104բ, № 2869, 97ա և այլն:

45 Ձեռ. № 2868, 130ա:

46 Մյուս Բաղր կամ Քաշունիք գավառի գյուղերից է: № 2868 (129բ), 2869 (223ա) ձե-ռագրերում և Ստ. Օրբելյանի հրատարակության մեջ (էջ 519) հանդիպում է «Վաժունիք» ձևով:

47 Գտնվում է Չորք գավառում: Ստ. Օրբելյանի հրատարակության մեջ տպված է «Վաժունիք» (էջ 521), № 2868 ձեռագրում գրված է «Վաժունիք», իսկ մյուս ձեռագրերում «Վաժանիք»:

48 Գտնվում է Գեղաթունի գավառում: Հրատարակության և ձեռագրերի մեջ հանդիպում է «Վաժոց», իսկ № 6546 ձեռագրում «Վաճոց» ձևով (218ա):

49 Գտնվում է Կովսական գավառում: Հրատարակության և ձեռագրերի մեջ հանդիպում է «Վաժնատուք», իսկ № 2869 ձեռագրում «Վարժնատուք» (223ա):

50 Գտնվում է Աղահեջ գավառում:

րին հոսանքը), Սևանա լճի ավազանի հարավային որոշ մասերի, Մղուկ (այժմ-
յան Սիսիանի շրջանի) գավառի հյուսիս-արևմտյան փոքր հատվածի, Ծահուկ
գավառի մեծագույն մասի և Շարուրի դաշտի հարավ-արևելյան մի փոքր մասի
տերիտորիայի վրա ապրել է «վայ» ցեղը: Մյուս գյուղերը, որոնց անունները
կազմված են «վայ» ցեղանվամբ և գտնվում են այլ գավառներում, ըստ երե-
վելիս հանդիսանում են ցեղային տեղաշարժերի արդյունք: Դա միանգամայն
տրամաբանական է, եթե նկատի ունենանք, որ Սյունիքի աշխարհագրական
պայմանները, որոնք նպաստավոր են խաշնարածության համար, ստիպել են
ցեղերին նոր արտավայրեր ձևաբերելու՝ պատճառով հաճախակի փոխել բնա-
կավայրերը:

Б. А. АРУТЮНЯН

К ВОПРОСУ ОБ ЭТИМОЛОГИИ НАИМЕНОВАНИЯ «ВАЙОЦ ДЗОР»

Р е з ю м е

Впервые о Вайоцдзорском уезде упоминают авторы V века Егише, Лазарь Парпеци, Мовсес Хоренаци и «Ашхарацуйц» (География) VII века. В дальнейшем это название часто встречается у некоторых армянских и иностранных авторов (араб. Баладзори—Vais, Ибн-Хаукаль—Vaizur, греч. Конст. Багрянородный—βαϊζόρ, груз. Стефане Тбетский—Vaidzor и другие). Существуют различные варианты наименования этого уезда: Вайоц дзор, Вайой дзор, Вайо дзор, Вайи дзор, Вайу дзор и Вау дзор.

Как гласило предание, название свое уезд получил от «Вай=плач, вопль, вой» — крика и плача людей, пострадавших от землетрясения 735 г. н. э. (Об этом узнаем из произведений Мовсеса Каганкатваци, Мхитара Айриванеци, Киракоса Гандзакеци и Степаноса Орбеляна). Но это не верно хотя бы по той простой причине, что название «Вайоц дзор» употреблялось и до этого землетрясения.

Название «Вайоц дзор» имеет этническое происхождение. На территории Вайоц дзора, в районах южной части бассейна озера Севан, по верхнему течению реки Тартар, а также в северо-западной части Цлукского уезда (нынешний Сисианский район), большей части Чахукского и малой юго-восточной части Шарурского уездов обитало племя «Вай», по имени которого и были названы многие местности, а именно: Вайоц дзор, Вайкуник, Вайуник (деревня в уезде Вайкуник), Вайхир=Вайкор или Вайхор (деревня в уезде Шахапонке), Вайхир Суфла и Улья (деревни в Шаруре), крепость Вайс (ныне руины той крепости называются Вейсалли Каласи), Вахсе=Вайкк или Вайк (селище в Вайоц дзоре) и т. д.

По мнению автора статьи, в рукописях «Истории губернии Сисакан» Степаноса Орбеляна в названиях деревень Важуник, Важаник, Важо-
ник и Вajoц списка налогоплательственных деревень Татевского монастыря. переписчики спутали буквы «ж» и «й» (յ и յ). Поэтому эти названия нужно чистать Вайуник, Вайаник, Вайоник и Вайоц. Это предположение еще раз подтверждает существование племени «Вай».